ՀՏԴ 257
Քաղաքագիտություն

Հայկ ՍՄԲԱՏՅԱՆ
Երևանի պետական համալսարան
Սոցիոլոգիայի տեսության և պատմության ամբիոնի ասպիրանտ
e-mail: hayk.smbatyan@gmail.com

ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐՑԱԽՅԱՆ ԿՈՆՖԼԻԿՏԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Արդի աշխարհում կոնֆլիկտների ուսումնասիրությունները առավելապես տեղափոխվել են մետակոնֆլիկտների մակարդակ, ինչի արդյունքում կոնֆլիկտի մասին գիտելիքը մի կողմից անջատվում է սկզբնական կոնֆլիկտից՝ դառնալով կոնֆլիկտ կոնֆլիկտի սահմանման վերաբերյալ, և մյուս կողմից կատեգորիզացվում է՝ կազմելով կոնֆլիկտի նարատիվը, այսինքն՝ կոնֆլիկտը: Այս տեսանկյունից, կարիք է առաջանում ներառական մեթոդաբանության, որը, ուսումնասիրելով պրակտիկ փորձը, կձևավորի պրակտիկ գիտելիք Արցախյան կոնֆլիկտի շուրջ՝ փորձելով համադրել առօրեական և գիտական դիսկուրսիվ տարածությունները:

Մասնակցային մեթոդաբանությունը հնարավորություն է տալիս խուսափել իրականություն-հասկացություն, գիտական գիտելիք և պրակտիկ գիտելիք անջրպետներից՝ թույլ տալով ներկառուցել գիտական մեկնաբանությունները տեղային, իրավիճակային համատեքստերում: Այս տեսամեթոդաբանական հոդվածը քննարկում է մասնակցային մեթոդաբանությունը Արցախյան կոնֆլիկտի ուսումնասիրման համատեքստում՝ մեթոդաբանական գրականության համապարփակ վերլուծության և կոնֆլիկտների մասնակցային հետազոտությունների փորձի ուսումնասիրման օգնությամբ:

Բանալի բառեր՝ *մասնակցային հետազոտություն, մեթոդաբանություն, կոնֆլիկտաբանություն, Արցախյան կոնֆլիկտ, սոցիոլոգիա*

А. Смбатян

ВОЗМОЖНОСТИ ПРИМЕНЕНИЯ ПАРТИСИПАТОРНОЙ МЕТОДОЛОГИИ В ИССЛЕДОВАНИЯХ КАРАБАХСКОГО КОНФЛИКТА

Изучение конфликтов в современном мире перешло в основном на уровень метаконфликтов, в результате чего знание о конфликте с одной стороны отделяется от изначального конфликта, превращаясь в конфликт вокруг определения конфликта, а с другой стороны категорируется, создавая нарратив конфликта, то есть сам конфликт. С этой точки зрения возникает потребность в инклюзивной методологии, которая посредством изучения практического опыта создаст практическое знание о Карабахском конфликте и попытается совместить повседневное дискурсивное

пространство с научным.
Партисипаторная методология позволяет избежать разрывов между реальностью и понятием, а также научным и практическим знанием, делая возможным помещение научных интерпретаций в локальные, ситуационные контексты. В данной теоретико-методологической статье обсуждается партисипаторная методология в контексте изучения Карабахского конфликта. Проведен комплексный анализ методологической литературы и опыта изучения конфликтов с применением партисипаторной методологии.
Ключевые слова: *партисипаторное исследование, методология, конфликтология, Карабахский конфликт, социология*

H. Smbatyan

APPLYING PARTICIPATORY RESEARCH IN THE STUDIES OF THE NAGORNO-KARABAKH CONFLICT

In the contemporary world, the studies of conflicts have moved to the level of meta-conflicts, resulting the knowledge of conflict to alienate from the original conflict becoming a conflict around the definition of conflict, at the same time self-categorizing thus forming the narrative of the conflict, and at the end of the day, the conflict itself. In this view, a necessity for an inclusive methodology comes up, that would allow studying the practical experience and forming practical knowledge on the Nagorno-Karabakh conflict, trying to chain the everyday and scientific discursive spaces.
Participatory methodology gives an opportunity to escape the gap between reality and conception, as well as between scientific and practical knowledge, allowing to embed the scientific explanations into the local and situational context. This theoretical-methodological article discusses the participatory methodology in its possible application on the Nagorno-Karabakh conflict, based on the comprehensive analysis of the methodological literature and the observation of the research experience of participatory studies of conflicts.
Keywords. *participatory research, methodology, conflict studies, Nagorno-Karabakh conflict, sociology*

Թեպետ կոնֆլիկտների ուսումնասիրության կոնցեպտուալ գրականությունն աստիճանաբար շարժվում է այլընտրանքային ուղղություններով, կոնֆլիկտների կարգավորումը գործնականում շարունակում է հիմնվել քաղաքական ռեալիզմի ֆրեյմերի վրա: Սա հանգեցնում է կոնֆլիկտների շուրջ դիսկուրսի, կոնֆլիկտից տուժած խմբերի մարգինալացմանը, դուրս մղում դրանք կոնֆլիկտների կարգավորման գործընթացներից՝ առավել կարևորություն տալով միջազգային հարաբերությունների հայեցակարգերին և ընդգծելով մրցակցության և հիերարխիայի նշանակությունը հասարակական հարաբերություններում: Կոնֆլիկտներում միջամտությունները, որոնք նպատակ են հետապնդում վերլուծել և հասցեավորել էթնիկ կամ կրոնական հիմքի վրա ձևավորված բռնի կոնֆլիկտները՝ փնտրելով կայուն

լուծումներ, դեռևս ավանդապես ընկած են միջազգային հարաբերությունների դաշտում և կոնֆլիկտները դիտարկում են երկբևեռ հասկացությունների մակարդակում: Այս տեսություններից և պրակտիկաներից շատերը, այդ թվում՝ պրոբլեմալուծող սեմինարները, խորհրդատվությունները և բազմակողմ դիվանագիտությունը, իրենց շարունակում են դիրքավորել միջազգային հարաբերությունների ոլորտում՝ օգտվելով վերջինիս հասկացութային ապարատից և մեթոդական գործիքակազմից[1]:

Կոնֆլիկտաբանության զարգացման ընթացքում գերիշխող պոզիտիվիստական հարացույցին զուգահեռ՝ առաջ եկան նաև փոքր ուղղություններ, մասնավորապես՝ նարատիվ մեդիացիան, առաջարկելով կոնստրուկտիվիստական պրակտիկաներ՝ հատկապես միջանձնային և ներխմբային կոնֆլիկների հետ աշխատելիս: Այս մոտեցումները, սակայն, դժվար կիրառելի էին բռնի քաղաքական կոնֆլիկտների ժամանակ:

Միջազգային հարաբերությունների բնագավառը, առաջինն առնչվելով կոնֆլիկտների ուսումնասիրությանը, բաժանվում է երկու հիմնական մտածողության դպրոցների՝ ռեալիստական և լիբերալիստական: Ռեալիզմի շրջանակներում բռնի կոնֆլիկտը դիտարկվում է որպես մարդկային վարքի բնական պայման, իսկ իդեալիզմը չի բացառում կայուն խաղաղության գոնե տեսական հնարավորությունը: Չնայած այս տարբերություններին՝ թե՛ ռեալիզմի, թե՛ իդեալիզմի դպրոցները հիմնված են միևնույն պոզիտիվիստական մտքի վրա, որը դիտարկում է պետությունը որպես վերլուծության ամենաառանցքային միավոր, իսկ կոնֆլիկտը՝ երկբևեռ երևույթ: Այս մոտեցումները ընդունվել են նաև կոնֆլիկտների կարգավորման բնագավառում, որի արդյունքում ձևավորվել է երկրորդ ուղու դիվանագիտությունը[2]: Միջազգային հարաբերություններում ռեալիզմին հակադրվելու եկավ լիբերալիզմի դպրոցը, որի ներկայացուցիչներն առավել հետաքրքրված էին պետությունների ներքին բնութագրիչներով, քան դրանց միջև հարաբերություններով[3]:

Այնուամենայնիվ, այսօր գոյություն ունեցող կոնֆլիկտները հնարավոր չէ միանշանակորեն համարել մաքուր միջպետական, քանի որ նույնիսկ երկու հիմնական կողմ ունեցող կոնֆլիկտներում ներգրավված են նաև մի շարք ոչ պետական միավորներ, չճանաչված պետական միավորներ և այլ հասարակական խմբավորումներ, որոնք հաճախ խիստ կարևոր դեր են խաղում կոնֆլիկտի դինամիկայում: Որպես երկբևեռ մոտեցումներին

---

[1] ***Themnér L., Wallensteen P.***, *Armed Conflict, 1946–2010. Journal of Peace Research, 2011, pp. 525-536*

[2] ***Mearsheimer J.***, *The Tragedy of Great Power Politics, New York, NY: W.W. Norton, 2003, pp. 17-21*

[3] *Նույն տեղում, էջ 15:*

այլընտրանք՝ 1990-2000-ականներին դաշտ ներմուծվեցին մի քանի նոր ուղղություններ, որոնց թվում էին մասնակցային պրակտիկաները[1]:

Հիմնվելով Գիդենսի գաղափարների վրա[2]՝ Քոնենն ու Խոնրադը հետազոտողների դերը տեսնում են «ոչ թե մարդկանց վերևից դիտարկելու, այլ նրանց միջից՝ որպես սոցիալական ակտորների»: Նրանց համոզմամբ՝ հետազոտողը պետք է գիտակցի, որ այն խնդիրները, որոնք առաջ են քաշվում հետազոտվողների կողմից, կարող են հասկացվել միայն իրենց հասանելի գիտելիքի և իրենց շուրջ ձևավորված սոցիալական կառուցվածքների պրակտիկ գիտելիքի հիման վրա[3]:

Այս տեսանկյունից, մասնակցային հետազոտությունները հիմնվում են այն տեսակետի վրա, որ կառուցվածքները ծանրակշիռ ազդեցություն են ունենում դրանցում ներգրավված անհատների կարծիքների, ընտրությունների և ռեֆլեքսիայի վրա: Միևնույն ժամանակ անհատները կարող են ազդել և փոփոխել այդ կառուցվածքները, սակայն հետազոտողները պետք է օգնեն զարգացնել այդ մասին պրակտիկ գիտելիքը:

Այսպես՝ մասնակցային հետազոտությունների մեթոդաբանությունը գիտական բնագավառ է ներմուծվում՝ նպատակ ունենալով ստեղծելու հետազոտական միջավայր, որտեղ տեղական գիտելիքի միջոցով հնարավոր է մշակել հեշտ ընկալելի և գործածական «տեղային տեսություն»: Հետազոտողի և մասնակիցների ակտիվ համագործակցության արդյունքում կարևոր շեշտադրում է կատարվում հենց մասնակիցների սեփական գործողությունների վրա՝ հնարավորություն ստեղծելով վերանայել հետազոտողի դիրքի ավանդական հայեցակարգումները:

Մասնակցային մեթոդաբանություն մուտք գործելուց առաջ պետք է հստակ գիտակցել դրա էպիստեմոլոգիական հիմքը և որդեգրել մասնակցային աշխարհայացք: Այդ տեսանկյունից, մասնակցային գործողության հետազոտության գլխավոր առանձնահատկությունն այլ հետազոտությունների նկատմամբ ոչ թե դրա գործիքակազմի, այլ՝ հետազոդի և հետազոտվողի միջև հարաբերությունների մակարդակի և հեռավորության[4] մեջ է: Սա հանգեցնում է նրան, որ մասնակցային

---

[1] *Մասնակցային հետազոտությունը իրականության ճանաչման ձև է, հետազոտական մոտեցում, որն առավել արդյունավետ կարող է լինել մարդկության առջև ծառացած արդի հիմնախնդիրների լուծման ուղիների բացահայտման համար: Այն նվազեցնում է հետազոտողի և հետազոտվողի միջև հիերարխիկ հարաբերությունները՝ հետազոտողին տալով համակարգողի դեր, իսկ հետազոտվողներին՝ հետազոտողների:*

[2] ***Giddens A.**, New Rules of Sociological Method: A Positive Critique of Interpretative Sociologies. Stanford, CA: Stanford University Press, 1993*

[3] ***Coenen H., Khonraad S.**, Inspirations and Aspirations of Exemplarian Action Research, Journal of Community & Applied Social Psychology, 2003, p. 440*

[4] ***Park P.**, What Is Participatory Research? A Theoretical and Methodological. Voices of Change: Participatory Research in the United States and Canada, 1993, p. 1*

հետազոտությունները ոչ թե հետազոտվողների շուրջ են իրականացվում, այլ նրանց հետ[1]:

Մասնակցային հետազոտությունները կիրառական են մի շարք գիտություններում և գիտակարգերում, այդ թվում՝ կրթություն, առողջապահություն, համայնքային զարգացում, կազմակերպական զարգացում, գյուղատնտեսություն, արդյունաբերություն, խոցելի խմբերի իրավունքներ և կոնֆլիկտներ[2]:

Մասնակցային հետազոտությունների մեթոդաբանությունը բավականին նոր մոտեցում է կոնֆլիկտների ուսումնասիրություններում: Կոնֆլիկտների կարգավորման պրակտիկաներն աշխարհում աստիճանաբար դիվերսիֆիկացվում են՝ ստանալով բազմազան ձևեր, ներառելով բանակցություններից մինչև արվեստի ներկայացուցիչների միջև համագործակցություններ:

Մասնակցային հետազոտությունը մի շարք կիրառություններ է ունեցել տարբեր կոնֆլիկտների վերլուծության և դրանց շուրջ պրակտիկ գիտելիքի ձևավորման շրջանակներում: Այդպիսի օրինակներից է «Life & Peace Institute»-ի կողմից իրականացված «Մասնակցային գործողության հետազոտությունը որպես կոնֆլիկտի տրանսֆորմացիայի գործիք. Հարավային Սոմալիի օրինակով»[3] հետազոտությունը, որը փորձում է ուսումնասիրել մասնակցային մեթոդաբանության կիրառելիությունը հարավային Սոմալիի կոնֆլիկտի պարագայում՝ բացահայտելով, թե արդյո՞ք այն որպես մեթոդաբանական մոտեցում նպաստում է տեղական լարվածության նվազեցմանը, ինչպես կարելի է այն ադապտացնել և ստանդարտիզացնել այս կամ այն ծրագրերի կամ գիտակարգերի շրջանակներում:

Մեկ այլ օրինակ է Ֆ. Ղամաղելյանի հետազոտական աշխատանքը[4], որում հեղինակը փորձում է բացահայտել բացառման և մարգինալացման առանձնահատկությունները, ինչպես նաև կոնֆլիկտածին ֆրեյմերի վերարտադրությունը՝ Ղարաբաղյան կոնֆլիկտի և Սիրիական հակամարտության օրինակներով:

Անաստասիա Ուայթն իր հոդվածում ներկայացնում է գործողության հետազոտական ռազմավարության կարևորությունը կոնֆլիկտների կարգավորման բնագավառում պրակտիկայի և տեսության զարգացման

---

[1] ***Herr K., Anderson L.***, *The Action Research Dissertation: A Guide for Students and Faculty. Thousand Oaks, CA: SAGE Publications, Inc., 2015, p. 3*

[2] ***Young L.***, *Participatory action research (PAR): A research strategy for nursing? Western Journal of Nursing Research, 2006, pp. 499-504*

[3] ***Life & Peace Institute***, *Participatory Action Research (PAR) as a tool for transforming conflict: A case study from south central Somalia, Uppsala: KPH, Trycksaksbolaget AB, 2016, p. 9*

[4] ***Gamaghelyan P.***, *Conflict Resolution Beyond the International Relations Paradigm: Evolving Designs as a Transformative Practice in Nagorno-Karabakh and Syria. Stuttgart: ibidem-Verlag, 2017, p. 9*

տեսանկյունից: Հարավաֆրիկյան Հանրապետության օրինակով իրականացված այս հետազոտությամբ հեղինակը փորձում է գործողության հետազոտության Լեվինյան մոդելի միջոցով բացահայտել համայնք-ոստիկանություն հարաբերությունների հնարավորությունները լոկալ փոխվստահության հիմնման և խտրականության վերացման տեսանկյունից՝ առանցքային ուշադրություն դարձնելով հաշտեցման և սոցիալական բուժման գործընթացներին, որ տեղի են ունեցել համայնքային և ազգային մակարդակներում[1]:

Մեթոդաբանության կիրառման մեկ այլ օրինակ է 1994 թ. մեկնարկած «Պատերազմական հասարակությունների ծրագիր»-ը, որն իրականացվել է Բերգհոֆի կոնֆլիկտների կառավարման հետազոտական կենտրոնի կողմից: Իր հոդվածում Ա. Յոհանսենն անդրադառնում է Էրիթրեայում, Գվատեմալայում, Մոզամբիկում և Սոմալիում իրականացված հետազոտությանը, որն ուսումնասիրում է նշված հասարակություններում հետպատերազմական համագործակցության հնարավորությունները: Մեթոդաբանության կիրառման ևս մեկ օրինակ է Պ. Լունդիի և Մ. ՄքԳավըրնի համահեղինակած դեպքի հետազոտությունը[2]: Հոդվածում Հարավային Իռլանդիայի օրինակով քննարկվում է մասնակցային գործողության հետազոտությունների դերը բռնի կոնֆլիկտներում գտնվող հասարակություններում զգայուն թեմաների ուսումնասիրություններ իրականացնելու մեջ: Հետազոտությունը հատկապես շեշտում է նմանատիպ ուսումնասիրությունների էթիկական կողմը՝ կարևորելով, որ դրանք որևէ վնասակար ազդեցություն չունենան մասնակիցների և հետազոտողների վրա[3]:

Մասնակցային մեթոդաբանության անխուսափելի սուբյեկտիվությունը ստիպում է անդրադառնալ մոտեցման արժանահավատությանը: Վերջինս որակական հետազոտություններում համարժեք է քանակական հետազոտությունների «վավերականություն» և «հուսալիություն» հասկացություններին: Այն առաջին անգամ կիրառության մեջ է դրվել Յ. Լինքոլնի և Է. Գուբայի կողմից[4]:

Բ. Հոլլը նկատում է, որ գործողության հետազոտությունը փորձում է «տեղ զբաղեցնել գիտելիքի ստեղծման սեղանի շուրջ»: Այն նպատակ ունի վավերացնել և տարածել հանրային, համայնքահեն գիտելիքը՝ փորձելով խնդրայնացնել սոցիալական մարգինալացումը և ճնշման կառուցվածքը, որ հիմնականում բնորոշ է այն հասարակություններին, որոնք տուժել են

---

[1] ***White A.***, *Lewin's action research model as a tool for theory building: A case study from South Africa. Action Research, 2004, p. 128*

[2] ***Johannsen M.***, *Participatory Action-Research in Post-Conflict Situations: The Example of the War-Torn Societies Project. Berghof Handbook for Conflict Transformation, 2001, p. 1*

[3] *Նույն տեղում, էջ 51:*

[4] ***Lincoln S., Guba, E.***, *Naturalistic Inquiry. Beverly Hills, CA: Sage Publications, 1985*

զինված կոնֆլիկտներից և գտնվում են կոնֆլիկտի փոխակերպման կամ հետկոնֆլիկտային գործընթացում[1]:

Օգտվելով արդեն գոյություն ունեցող տեսական հիմնավորման տրամաբանական սխեմայից՝ մասնակցային հետազոտությունների շրջանակներում կարելի է առաջադրել մի շարք հարցեր[2], որոնց պատասխանները ապահովում են մեթոդաբանության արժանահավատությունը.

1. Ի՞նչ հիմքով կարելի է ենթադրել, որ հետազոտությամբ առաջարկված դատողությունները վստահելի են:
2. Ի՞նչ հիմնավորումներ ունեն առաջարկված դատողությունները:
3. Արդյո՞ք այդ դատողությունները հասցեավորում են հետազոտվող հիմնախնդիրը:

Այս հարցերի պատասխանները ստանալու համար Ջ. Քրեսվելը և Մ. Դանան առաջարկում են մի շարք ընթացակարգեր: Դրանք ներառում են՝ տրիանգուլիացիա, հիմնավորումներ, մերժող ապացույցների փնտրտուք, ռեֆլեքսիա, մասնակիցների հետ ստուգում, դաշտային աշխատանքներում երկարաժամկետ ներգրավվածություն, փորձագիտական քննարկում և այլն[3]:

Հետևելով այս տրամաբանությանը՝ մասնակցային հետազոտություններն արտադրում են առավել հուսալի և համոզիչ արդյունքներ, քանի որ այդպիսով «միավորում են փորձագետների գնահատականը լոկալ գիտելիքի հետ»[4], իսկ տեղական շահառուները առավելագույնս ներգրավված են գիտելիքի և խնդիրների լուծման առաջարկությունների հավաքագրման մեջ. վերջինս կարևոր է այն տեսանկյունից, որ, ըստ մասնակցային հետազոտությունների փիլիսոփայության, հետազոտության ընթացքը և արդյունքները պետք է շոշափելի օգուտներ բերեն հետազոտվող համայնքի համար[5]:

Այս տեխնիկաների համատեղ կիրառումը թույլ կտա առաջարկել մասնակցային հետազոտությունը որպես Արցախյան կոնֆլիկտի մասին գիտելիքի կուտակման կիրառելի և հիմնավորված մեթոդաբանություն՝ միաժամանակ գիտակցելով մեթոդաբանության սահմանափակումները:

Ռիսկերի նվազեցման տեսանկյունից կարևոր է գիտակցել և անդրադառնալ այն մեթոդաբանական սահմանափակումներին, որոնք

---

[1] ***Hall B.***, *I wish this were a poem of practices of participatory research. Handbook of action research. London: Sage, 2001, p. 176*

[2] ***Marshall C., Gretchen B.***, *Designing Qualitative Research. Los Angeles, CA: Sage, 2011, p. 40*

[3] ***Creswell J., Dana M.***, *Determining Validity in Qualitative Inquiry. Theory Into Practice, 200, pp. 124-130*

[4] ***Brydon-Miller M., Greenwood D., Maguire P.***, *Why Action Research? Action Research, 2003, p. 25*

[5] ***Reason P.***, *Integrating action and reflection through co-operative inquiry. Management Learning, 1999, pp. 207-226*

աշխատանքի հետ առաջ են գալիս: Մասնավորապես պետք է առանձնացնել հետևյալ երկու սահմանափակումները.

1. Մասնակցային մեթոդաբանության անխուսափելի սուբյեկտիվությունը ռիսկային իրավիճակ է ստեղծում հավաքագրված տվյալների արժանահավատության տեսանկյունից: Այս առումով, մասնակցային հետազոտությունը պետք է ի սկզբանե ներկայացուցչականության հավակնություններ չունենա և կիրառվի միայն տեղային խնդիրները խորապես հասկանալու նպատակով՝ գիտակցելով մեթոդաբանության սուբյեկտիվությունը:

2. Մասնակցային հետազոտությունների վերջնանպատակը սովորաբար հետազոտվող համայնքի կյանքում շոշափելի սոցիալական փոփոխությունների հասնելն է: Այդուհանդերձ, սոցիալական փոփոխությունը կոնֆլիկտի մասնակցային հետազոտության համատեքստում պետք է դիտարկել միայն երկարաժամկետ կտրվածքով՝ նկատի ունենալով, որ առաջարկվող մեթոդաբանության նորույթը և դրա հնարավոր լայն կիրառությունները նշանակալի ներուժ ունեն դաշտ ներմուծելու կոնֆլիկտի մասին գիտելիքի կուտակման առավել ներառական մոտեցում՝ հետագայում բերելով ուղղակի և անուղղակի փոփոխությունների թե՛ գիտական շրջանակներում, թե՛ կոնֆլիկտից անմիջապես տուժող խմբերի մոտ՝ կոնֆլիկտային կոնտեքստից վերացարկման հնարավորություն տվող և կոնֆլիկտից ծագած հիմնախնդիրների լուծման հարցում անմիջական մասնակցություն ունենալու տեսանկյունից:

Նպատակ ունենալով ստեղծելու հետազոտական միջավայր, որտեղ տեղական գիտելիքի միջոցով հնարավոր է մշակել հեշտ ընկալելի և գործածական «տեղային տեսություն»՝ մասնակցային մեթոդաբանությունը կարելի է դիտարկել Արցախյան կոնֆլիկտի մասին պրակտիկ գիտելիքի կուտակման համատեքստում: Այդպիսով՝ հնարավոր է լինում արձանագրել, որ այն արձագանքում է այն կարիքին, որ տեսությունը պետք է հրաժարվի պարզապես գիտելիքի համակարգ լինելուց և սկսի կիրառության մեջ դրվել, քանի որ գոյություն ունեցող ավանդական հետազոտական պրակտիկաները չեն հանգեցնում անձնական կամ սոցիալական փոփոխությունների:

Այսպես՝ մեթոդաբանության հանգամանալից վերլուծությունը և դրա կիրառության նպատակահարմարությունը Արցախյան կոնֆլիկտի ուսումնասիրություններում թույլ է տալիս նախապես գիտակցված և սահմանված մեթոդաբանական սահմանափակումների համատեքստում առաջարկել մասնակցային հետազոտությունը որպես Արցախյան կոնֆլիկտի մասին գիտելիքի կուտակման կիրառելի և հիմնավորված մեթոդաբանություն:

Հոդվածը տպագրության է երաշխավորել Երևանի պետական համալսարանի սոցիոլոգիայի տեսության և պատմության ամբիոնը: